ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Медицинский Центр "Норк-Мараш"

Армения, г. Ереван, Норк,

ул. А. Арменакяна 108/4

Тел: (+37410) 65 09 71; 65 09 61

Факс: (+37410) 65 38 69

или 65 05 60

ՀՀ, ք. Երևան, Նորք

Ա. Արմենակյան 108/4

Հեռ. (+37410) 65 09 71; 65 09 61

Ֆաքս (+374 10) 65 38 69

կամ 65 05 60

"Nork-Marash" Medical Center

Armenakian str. 108/4

Yerevan 0047, Armenia

Phone: (+37410) 65 38 69

Fax: (+37410) 65 38 69, 65 05 60

E-mail: heart@nmmc.am

21.11.2023թ.
N 08-353/23

<<Քեշ>> ՍՊԸ տնօրեն
պարոն Ա. Մացակյանին

Հարգելի պարոն Մացակյան

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Քեշ>> ՍՊԸ-ի միջև 12.09.2023թ կնքված թիվ ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-23/59-1 պայմանագրով <<Քեշ>> ՍՊԸ-ն ստանձնել էր վճարային տերմինալով վճարների հավաքագրման ծառայություններ մատուցելու պարտավորություններ: Ծառայությունների մատուցման փուլում պարզվել էր, որ Ընկերությունը չունի դրա համար օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա, սակայն ունի գործակալության պայմանագիր լիցենզիա ունեցող այլ ընկերության հետ: 02.11.2023 թվականին հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարություն իրավիճակի կարգավորման նպատակից ելնելով: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 17.11.2023 թվականի գրության, Ընկերությունը, անկախ գործակալության պայմանագիր ունենալու փաստից, հանդիսանալով ընթացակարգի մասնակից պետք է բավարարի ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին և ունենա նշված ծառայությունները մատուցելու համար օրենքով նախատեսված համապատասխան լիցենզիան:

Ելնելով վերը նշված փաստերից, հիմք ընդունելով կնքված պայմանագրի 7,3 կետը, <<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն միակողմանի լուծում է պայմանագիրը ողջ ծավալով:

Տեղեկացնում ենք նաև, որ Կատարողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծվելու մասին պատշաճ ծանուցված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:

Միաժամանակ հայտնում ենք, որ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն.

<< Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը>>:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ